

# Տուբերկուլյոզ

Տուբերկուլյոզը խրոնիկ ինֆեկցիոն հիվանդություն է, որը բնութագրվում է տարբեր հյուսվածքներում և օրգաններում առանձնահատուկ հանգույցների՝ տուբերկուլների առաջացումով: Հարույցիցները պատկանում են միկոբակտերիաների սեռին: Տարբերում են մարդու, տավարի և թռչունների մոտ առաջացնող տեսակներ: Հարուցիչները պոլիմորֆ են, աերոբ, սպիրտա-թթվակայուն և անկայուն են արհեստական պայմաններում: Արտաքին միջավայրում՝ հողում, գոմաղբում պահպանվում են ամիսներ շարունակ ի շնորհիվ բակտերիալ թաղանթում ճարպամոմային տարրերի առկայությամբ: Կենդանիները վարակվում են օդա-կաթիլային, ալիմենտար ու սեռական եղանակներով:

Մարդը կարող է վարակվել աերոգեն եղանակով՝ հիվանդ կենդանու հետ շփվելիս, հիվանդ կենդանու մսից՝ վնասված մաշկի միջոցով, հիվանդ կենդանուց ստացված մթերքից՝ ալիմենտար եղանակով:

Հիվանդությանը նպաստում են կենդանիների խնամքի ու կերակրման պայմանների, անասնաշենքերում միկրոկլիմայի չափանիշների խախտումը, իսկ մարդկանց մոտ վատ սացիալական պայմանները:

Կլինիկական նշանները զարգանում են դանդաղ և կախված են օրգանիզմում հարուցչի լոկալիզացիայից: Հիմնական նշաններն են հյուծվածությունը, հազը լուծը և ավշային հանգույցների մեծացումը: Սպանված կենդանիների տարբեր օրգաններում հայտնաբերում են առանձին կամ բազում, տարբեր չափսի հանգույցներ՝ կրանման չոր պարունակությամբ: Անասնաբուժության մեջ տուբերկուլյոզի ախտորոշման հիմնական եղանակը՝ ալեգիական է, որը պետք է հաստատվի ախտաբանատոմիական կամ մանրէաբանական եղանակով:

Հիվանդության կանխարգելման նպատակով անցկացվում են տարեկան հակահամաճարակային կանխարգելիչ միջոցառումներ, ալերգիական ստուգումներ՝ հիվանդ կենդանիներին ժամանակին հայտնաբերման համար: